

ՀՀ Արձավիրի մարզի Այգեշատ (Արմ.) համայնքի ղեկավարի 2014 թվականի տարեկան հաշվետվության

Արձանագրություն

19.01.2015 թվականին կայացավ Արձավիրի մարզի Այգեշատ համայնքի ղեկավարի 2014 թվականի երկրորդ կիսամյակի և 2014 թվականի տարեկան հաշվետվությունը:

Հաշվետվությանը ներկա էին ՀՀ Արձավիրի փոխմարզպետ Դավիթ Սամսոնյանը, Այգեշատ համայնքի ավագանու անդամներ՝ Հայկ Համբարձումյանը, Զորիկ Ոսկանյանը, Գևորգ Ղազարյանը, Վաչագան Հունանյանը, Ռուստամ Հասոյանը և Այգեշատ համայնքի թվով 97 բնակիչներ: Այգեշատ համայնքի ղեկավար Արամայիս Մխիթարյանը հանգամանալից ներկայացրեց 2014 թվականի երկրորդ կիսամյակի և 2014 թվականի տարեկան հաշվետվությունները: Այգեշատ համայնքի ավագանու անդամները իրենց շնորհակալությունը հայտնեցին Արձավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանին և համայնքի ղեկավար Արամայիս Մխիթարյանին համայնքում կատարված աշխատանքների համար:

Համայնքի բնակիչ Սմբատ Ալեքսանյանը հարց բարձրացրեց 2015 թվականին գյուղատեսական մթերքների մթերման վերաբերյալ: Համայնքի ղեկավար Արամայիս Մխիթարյանը պատասխանելով բնակչի հարցին՝ ասաց, որ այս տարի անսահմանափակ քանակությամբ կմթերվեն բանջարեղեն և խաղող:

Համայնքի բնակիչ Ռաֆիկ Խաչատրյանը հարց բարձրացրեց 2015 թվականին պետական աջակցության ծրագրով պարարտանյութերի ներդրման և բաշխման վերաբերյալ: Համայնքի ղեկավար Արամայիս Մխիթարյանը պատասխանելով բնակչի հարցին՝ ասաց, որ այս տարի նույնպես ներգրվելու է ազոտական, ֆոսֆորական և կալյուճական պարարտանյութեր, որոնք մահչելի գնով կտրամադրվեն բնակիչներին:

Արձանագրությունը կազմեց Այգեշատ համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար՝

Ս. Ղազարյան

Այգեշատ համայնքի ղեկավար՝

Արամայիս Մխիթարյան



22 Արմավիրի մարզի Այգեշատ (Արմ.) համայնքի 2014թ – ի համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվություն

1. Գործավարություն.

2014թ – ի ընթացքում համայնքի բնակիչներից ստացվել է 78 դիմումներ և առաջարկություններ, որոնք ստացել են իրենց համապատասխան լուծումները: Համայնքի բնակիչներին տրամադրվել են 544 հատ տեղեկանքներ, 39 բնութագրեր: Հղվել են 100 հատ պաշտոնական գրություններ մարզային և ֆեդերալ ենթակայության կառույցների ղեկավարներին: Համայնքի ղեկավարի կողմից քննարկվել է 47 որոշում: Արձակվել է 15 կարգադրություն:

2. Ավագանու գործունեություն.

2014թ – ի ընթացքում համայնքի ավագանին զուգարել է 6 հերթական և 4 արտահերթ նիստ: Արտահերթ նիստերը հրավիրվել են համայնքի համար խիստ հրատապ հարցերի քննարկման և լուծումներ սալու համար, մասնավորապես կատարվել է փոփոխություններ և լրացումներ համայնքի 2014 թվականի բյուջեում: Հաստատվել է համայնքի 2015 թվականի բյուջեն, հաստատվել է մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը: Սահմանվել է 2015 թվականի ընթացքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը: Ավագանու քննարկմանն են ներկայացվել 29 դիմումներ և ստացել իրենց համապատասխան լուծումները:

3. Գյուղատնտեսության ոլորտ.

Հաշվետու ժամանակահատվածում համայնքի առկա հողատարածքներն ու
ցանքերն են.

բնակավայրային նշանակության հողեր – 140 հա.

գյուղ. Հշանակության հողատարածք – 352 հա., որից

խաղողի այգի – 50.1 հա.

պտղատու այգի – 67.4 հա.

2014թ- ին կատարվել է 81.3 հա. հացահատիկի, լոբու՝ 5 հա. կարտոֆիլի՝ 9 հա.,
բոստանային կուլտուրաների՝ 29 հա., վարունգի՝ 14 հա., յոլիկի՝ 23 հա., սեղանի

ճակնդեղ՝ 2 հա., սոխի՝ 37 հա. և այլ բանջարեղենի՝ 20 հա., Եգիպտացորենի՝ 30 հա., արևածաղիկի՝ 12 հա., կաղամբի՝ 1 հա. ցանքեր:

Անասնազրկաբանակ.

խոշոր եղջերավոր անասուններ – 593 գլուխ, որից կովեր՝ 154 գլուխ
մանր եղջերավոր անասուններ – 2610 գլուխ ոչխար, որից մայրեր՝ 2306
267 խոզեր, որից մայրեր՝ 71

մեղվաբնուանիք – 595

թռչուններ – 4526

2014 թվականին կատարվել է 173 հա. ցրտահերք, ցանվել է 73 հա. աշնանացան
ցորեն:

4. Հողի հարկ և գույքահարկ.

2014 թ – ին համայնքային բյուջեով նախատեսվել է 7664.7 հազար դրամ հողի
հարկ: 01.01.2015 թ. դրությամբ համայնքի հողօգտագործողներից զանձվել և
մուտք է արվել համայնքի բյուջե 7959.1 հազար դրամ հողի հարկ, որը կազմում
է համայնքի տարեկան հողի հարկի 103.8 % - ր:

Գույքահարկը բյուջեի եկամտային մասով նախատեսվել է 2535.0 հազար դրամ:

01.01.2015 թ – ի դրությամբ զանձվել և մուտք է արվել համայնքի բյուջե 3458.5
հազար դրամ, որը կազմում է տարեկան գույքահարկի 136.4 % - ր: 2014 թ – ի
բյուջեով նախատեսվել է 1230.0 հազար դրամ տեղական տուրքեր և վճարների:

01.01.2015 թ. դրությամբ զանձվել և մուտք է արվել համայնքի բյուջե 671.0 հազար
դրամ, որը կազմում է տարեկան տարեկան տեղական տուրքերի և վճարների

54.5 % - ր: 2014 թվականի բյուջեով նախատեսվել է 121.0 հազար դրամ
վարձավճար: 01.01.2015 թ. դրությամբ զանձվել և մուտք է արվել համայնքի
բյուջե 121.0 հազար դրամ, որը կազմում է տարեկան վարձավճարի 100.0 % - ր:

2014 թ – ի բյուջեով պետության կողմից ֆինանսական համահարթեցման
սկզբունքով տրվող դոտացիան կազմել է 26074.7 հազար դրամ, որը
ֆինանսավորվել է 100.0 % - ով: 2014 թ – ի բյուջեում սեփական եկամուտները
նախատեսվել է 11680.7 հազար դրամ: 01.01.2015 թ. դրությամբ սեփական
եկամուտների փաստացի մուտքերը կազմել են 12209.6 հազար դրամ: Սեփական
եկամուտները կատարվել են 104.5 % - ով:

Ծախսեր.

Այգեշատի գյուղապետարանը 2014 թ – ի հունվար ամսից առ 01.01.2015 թ –ի դրությամբ կտուարել է հետևյալ ծախսերը:

1. Վճարվել է քնթացիկ աշխատավարձ – 14262.7 հազար դրամ
2. Վճարվել է աշխատողներին պարգևատրում – 802.8 հազար դրամ
3. Փոխանցվել է եկամտային հարկ – 4421.2 հազար դրամ
4. Փոխանցվել է սոց. Վճար - 126.1 հազար դրամ
5. Կատարվել է թերթի բաժանորդագրության ծախս – 74.4 հազար դրամ
6. Մասնագիտական ծառայությունների համար - 105.6 հազար դրամ
7. Փոխանցվել է էլեկտրոնների գիայի համար - 5250.0 հազար դրամ
8. Փոխանցվել է գազի օգտագործման գումար - 325.7 հազար դրամ
9. Գազի տեխ. Սպասարկման համար - 30.6 հազար դրամ
10. Միջոցառումների համար մայիսի 9-ը, մայիսի 28, վերջին զանգ, բերքի տոն և ամանորյա, ծախսվել է - 900.0 հազար դրամ
11. Գրենական պիտույքներ ձեռք բերելու համար - 350.0 հազար դրամ
12. Համակարգչային ծառայության համար - 78.2 հազար դրամ
13. Կրակմարիչ ձեռք բերելու համար - 110.0 հազար դրամ
14. Կապի ծառայության համար - 14.5 հազար դրամ
15. Ծաղիկ-ձաղկեպսակ ձեռք բերելու համար - 350.0 հազար դրամ
16. Աղբահանություն կազմակերպելու համար - 1000.0 հազար դրամ
17. Ազգաբնակչությանը ցուցաբերվել է դրամական օգնություն – 3445.0 հազար դրամ
18. Ամանորյա տոպրակներ ձեռք բերելու համար – 190.0 հազար դրամ
19. Մանկապարտեզին փոխանցվել է սուբսիդիա – 5646.5 հազար դրամ
20. Փողոցների ավազապատման համար ծախսվել է - 578.0 հազար դրամ
21. Ջրի խորրային հորի պոմպի վերանորոգման համար – 473.0 հազար դրամ
22. Նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպությանը փողանցվել է - 300.0 հազար դրամ:

Ազգաբնակչություն.

ա) Համայնքի փաստացի բնակչությունը կազմում է 2018 մարդ:

2014 թ – ի քննազրում Այգեշատ համայնքում ծնվել է 17 երեխա, գրանցվել է 3 մահ:

Ընտանեկան նպաստ ստացողներ 20 քնտանիք:

Համայնքում թոշակառուները 231 մարդ է:

5. Կրթություն և գիտություն.

Համայնքում գործում է մեկ դպրոց 201 աշակերտով: Մեկ մանկապարտեզ՝ հաճախող 56 երեխայով և 8 աշխատողով:

6. Մշակույթ.

Համայնքը ունի մեկ մշակույթի տուն 4 աշխատողով, գործող գրադարան 1 աշխատողով: Մշակույթի տանը գործում է ազգագրական պարերի խումբ՝ 46 երեխաներով:

7. Առողջապահություն.

Համայնքում գործում է բժշկական ամբուլատորիա՝ ՀՈԱԿ 6 աշխատողով:

8. Զինակոչ.

Համայնքի ղեկավարի և աշխատակազմի գործունե աջակցությամբ պատշաճ կերպով կազմակերպվել է 2014 թ - ի աշնանային զինակոչը կատարվել է պիան առաջադրանքը:

9. Միջոցառումներ և սոցիալական ոլորտ.

Պատշաճ կերպով նշվում են ՀՀ պետական տոները և հիշատակի օրերը: Ըստ հարկի նշվում է անկախության օրը, բերրի տունը: Պարբերաբար իրականացվում է գյուղի փողոցների սղրահանությունը: Անխափան իրականացվում է խմելու ջրի մատակարարումը:

10. Համայնքի հիմնախնդիրներ.

ա) համայնքի հիմնախնդիրներից է համարվում համայնքային նշանակության ճանապարհների և դաշտամիջյան ճանապարհների նորոգումը (հարթեցում, ավազապատում), որը կկազմի մոտ 20.000.000 ՀՀ դրամ

բ) վերանորոգման կարիք ունի նաև գյուղապետարանի շենքը, որի ծախսը կկազմի մոտ 25.000.000 ՀՀ դրամ

գ) համայնքի հիմնախնդիրներից է նաև փողոցների լուսավորության հարցը, որի ծախսը կկազմի մոտ 20.000.000 ՀՀ դրամ

դ) համայնքի հիմնախնդիրներից է նաև համայնքի նոր թաղամասի
գազաֆիկացման և էլեկտրոֆիկացման հարցը, որի համար կծաղավի մոտ
10.000.000 ՀՀ դրամ

Այգեշատ (Արմ.) համայնքի ղեկավար՝



Ա. Մխիթարյան

